ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/142

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.09.2018թ. թիվ 01.1/26-3/16653-18 գրությամբ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 10.09.2018թ. թիվ 01/61-19881 գրության հիման վրա, 14.09.2018թ. թիվ 01.1/26-3/16653-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.09.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մինչ օրս կատարել է վերանորոգման աշխատանքներ և բարեխղճորեն կատարել է պետական եկամուտների գծով բոլոր պարտավորությունները: Սիստեմատիկաբար մասնակցել է և մասնակցում է շինարարական աշխատանքների պետական գնումների գործընթացին: 16.08.2018թ. և դրանից առաջ Ընկերությունը մասնակցել է պետական գնումների գործընթացներին և պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված էլեկտրոնային տեղեկատվության մեջ չի նշվել, որ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն ունեցել է ժամկետանց պարտքեր, ուստի Ընկերությունը, հիմք ընդունելով պարտք չունենալու հանգամանքը, 16.08.2018թ. մասնակցել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և ճանաչվել սկզբում 2-րդ տեղ, այնուհետև՝ 1-ին տեղ: Սակայն պարզվել է, որ Շենգավիթի ՀՏ-ի կողմից ֆինանսների նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության մեջ առկա է 2017թ. 274 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի պարտք, հետո 31.08.2018թ. գումարը վճարվել է:

16.08.2018թ. Ընկերությունը ճանաչվելով առաջին տեղ, ստացել է արձանագրություն, որում նշված է, որ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն չունի ժամկետանց պարտավորություններ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/142 ընթացակարգի շրջանակներում 19.09.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.09.2018թ. թիվ 01/61-19881 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի շրջանակներում «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասի դրույթի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) հարցում է ներկայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնկցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին, համարվել է իրականությանը չհամապատասխանող:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 274 000 ՀՀ դրամի չափով, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով, 44-րդ կետով, հրավերի 7.15-րդ կետով, որոշել է մերժել Ընկերության հայտը և հրավերով սահմանված փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/142 ընթացակարգի շրջանակներում 19.09.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/142 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/142 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.08.2018թ. հայտ է ներկայացրել «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 30.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 274 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.09.2018թ. թիվ 01.1/26-3/16653-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 10.09.2018թ. թիվ 01/61-19881 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման

չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.08.2018թ. հայտ է ներկայացրել «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 27.08.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 30.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 274 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 16.08.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 274 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 03.10.2018թ. թիվ 1/6-1/58061-18 գրությամբ հայտնել է, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնման ընթացակարգի եզրակացության մեջ արտացոլված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց 274 000 ՀՀ դրամ պարտավորությունը՝ 16.08.2018թ. դրությամբ, առաջացել է դրոշմանիշային վճարը չվճարելու արդյունքում:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 19.07.2017թ. «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին» թիվ 228-Ն հրամանով հաստատված տեղեկանքի ձևի համաձայն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Դրա հետ մեկտեղ, Ընկերության կողմից ներկայացվել է ***16.08.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի դրոշմանիշների գծով վճարման ենթակա գումարի տողը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, քաղվածքում նախատեսված չէ:***

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 03.10.2018թ. թիվ 1/6-1/58061-18 գրությունը, ինչպես նաև հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության որպես հարկ վճարողի՝

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ն «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունն, առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.09.2018թ. թիվ 01.1/26-3/16653-18 գրությամբ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 01829142) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**